J. H. Du Bois

ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐ

Նրանք՝ այդ երկու երաժիշտները՝ իրար թշնամի էին։ Ավելի ճիշտը՝ մինն էր թշնամի մյուսին, անտաղանդը և անհաջողակը։ Մյուսը՝ տաղանդավորը պաշտպանվում էր միայն իր նախանձորդի հարձակումներից, ու երբեմն էլ, երբ սա չափից դուրս էր գալիս և փրփրալի կատաղությամբ չարախոսում էր իր մասին, տաղանդավորը մի զայրալի խոսք էր ասում, թերևս վիրավորիչ խոսք։

Անտաղանդը զրպարտում էր իր արվեստակցին, թե սա է պատճառն իր անհաջողության։ Հարձակվում էր նաև հասարակության վրա, որ սա կողմնակալ և նախապաշարյալ վերաբերմունք ունի դեպի տաղանդավոր երաժիշտը և անարդար է դեպի ինքը։

Բայց, ինչպես միշտ, բնությունն ու հասարակությունն անտարբեր են այդ գանգատների ու հարձակումների դեմ։ Եվ ահա տաղանդավորը բարձրանում էր օրեցօր դեպի իր փառքի գագաթնակետը, մինչ անտաղանդը տանջվում էր անփառունակ։ Առաջինին հոբելյան տվին, համազգային պարծանք կոչեցին։

Անցավ ժամանակ, և տաղանդավորը մեռավ։ Համազգային սուգը, որով արձագանքեց հասարակությունը այդ թանկագին կորուստի համար՝ ծանր ու չափազանց ուռեցրած թվաց անտաղանդին։

Սակայն մի գաղտնի ուրախություն սողաց նրա սիրտը։ Ա՜, տաղանդավորը գնաց, և ասպարեզը մնաց... երևի՞, արդե՞ն... անտաղանդին։ Կարծես եկավ ժամանակը, որ հիմա էլ սա ճաշակի փառքի երջանկությունը։ Եվ այդպես էլ պիտի լիներ անշուշտ։ Չէ՞ որ ասպարեզն էլ թափուր է։

Բայց օրեր անցան, մեջ ընկավ անտաղանդը, ջանք թափեց և սպասեց հետևանքի։

Ոչ մի հետևանք։ Հասարակությունն անտարբեր էր, ինչպես և առաջ։

Տաղանդավորն էլ մեռավ, բայց անտաղանդը երջանկություն ձեռք չբերեց։ Անտաղանդությունն՝ ինչպես մշուշ՝ եկավ ավելի թանձր պաշարեց անտաղանդ վերապրողին։

Տխուր, անմխիթար օրերը շարունակեցին անցնել անպտուղ, անհետևանք, անփառունակ...

ՄՐՋՅՈՒՆՆԵՐ

Մրջյուններ էին վխտում ճանապարհի վրա։ Վազվզում արագ-արագ, խաչաձևում ճանապարհը, կտրում-անցնում ամեն ուղղությամբ։ Եվ ինչ-որ շատ էին նրանք։ Ահա նրանցից դիակիկներ կան այստեղ, այնտեղ։ Այդ անցորդներն են ոտնակոխ արել նրանց, և երևում է, որ ամեն րոպե վտանգված է նրանց կյանքը։

Բայց... սա՞ ինչ բան է։ Նրանք այստեղ մինչև անգամ բո՞ւյն ունեն։ Ահա՛ թե ինչ։ Եվ բույնը ուղղակի ճանապարհի վրա։ Պաշար են կրում, ձվիկներ են դրել արևի տակ չորացնելու, հող են դուրս ածում բնից։ Մարդիկ կարգին գործի վրա են այստեղ, աշխատում են տենդորեն։ Բայց ի՞նչ խելք է այսպիսի զոհերով, այսքան անցորդների սարսափելի կոշիկների արանքում (երևակայո՞ւմ եք...) բույն ունենալ, չհեռանալ այստեղից, ապրել հանգիստ, աշխատել, դեռ ուրախանալ, հուսա՞լ։ Եվ մինչև անգամ տեսել...

Եվ նրանք չեն հեռանում, ապրում են այստեղ, աշխատում, ուրախանում, հուսում։ Եվ տեսո՞ւմ...

«Է՜հ, հայրենիք էս — խորհեցի անցա։ Կներեք, չգիտեմ, արդյո՞ք մրջյուններն է՞լ այդպես կնայեին գործին։

Գոնե ես այդպես խորհեցի։

ԼԵԶՈՒ

Նրանք, երկուսը, հանդիպեցին իրար։ Չէր սպասում նրանցից մեկը, որ մյուսը կենդանի է։ Լսել էր, որ նրան դժբախտություն է պատահել, որ նա չէր դիմանա այդ դժբախտությանը, կմեռներ։

Եվ ահա՛, ի՞նչ ուրախալի բան՝ նա կենդանի՞ է...

Իրար էին նայում և չէին խոսում։ Ճիշտը՝ չէին կարողանում խոսել։ Խոսքը քիչ եղավ։

Չկար այն խոսքը...

Միայն նայում են իրար և...

— Հը՛մ,— ժպտում է սա։

— Հա՛,— ժպտում է մյուսը։

Կրկին նայում են իրար ոտից գլուխ ու էլի... ժպտում.

— Հա՛, հը՛մ...

Է՛հ։ Նախամարդի՞կ են։ ի՞նչ են, թե՞ ապագայի մարդիկ։ Ո՞ւր կորավ լեզուն, այսքան միլիոնավոր տարիների լեզուն... «Հա՛, հը՛մ», սրանով խոսք ու զրո՞ւյց կլինի։

Բայց տե՞ս, եղա՞վ։

Եվ որքա՞ն նրբություններ, խոր մտքեր այս մի «հըմ, հա»-ի մեջ...

ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ջլապինդ բազուկները լարած, քլունգը պրկուն ձեռքերում շարժելով նա զարկում էր սարի կրծքին, շարժում, տեղահան էր ուզում անել մեծ քարաբեկորը։

Նա մերկացել էր. և ուռուցիկ կրծքի վրայով կաթում, գլորվում էին քրտնքի կաթիլները։ Իսկ շառագույն դեմքը ժպտում էր։

Երբեմն էլ ատամները պինդ սեղմելով կծկում էր դեմքի մկանները, գայրանում և մռնչալով քլունգը ետ էր տանում ու ուժգին հարվածում սարի կրծքին։ Ապա կրկին խաղաղ քանդում էր քարաբեկորի շուրջը պնդացած քարահողը։

Երբեմն էլ կատակով փնթփնթում էր ու երգում։

Մոտեցա.

— Հը, դժվա՞ր է։

Ջդադարեց հարվածելուց։ Միայն հարվածների ռիթմի միջով դեպի իմ կողմը նետեց.

— Բա ի՞նչ... զոռո՞վ կլի, խաթրով չի՞ լլի։

— Աշխատա՞նքը։

— Աշխատանքը։ խաթրով չի՞ տա, զոռո՞վ կտա։

— Հշմարիտ է։

— Բա՞... կուզե՞նք, որ վերցնենք։

Ասաց, ուժգին հարվածեց ու երգեց, ինչպես կռիվ մտնող մարտիկ։